

## Կ Ա Ր Ծ Ի Ք

Ասյա Արթուրի Սիմոնյանի «Մանկավարժական բուհերի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկան» թեմայով ատենախոսության՝ ներկայացված ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսական թեման հույժ արդիական է և կասկած չի հարուցում, որ լուծվող խնդիրները կարևոր նշանակություն ունեն ուսանողուհիների՝ ապագա մասնագիտական մանկավարժական գործունեությանը արդյունավետ նախապատրաստվելու համար: Գաղտնիք չէ, որ ուսուցչի մասնագիտությանը բնորոշ են նյարդային մշտական գերբեռնվածությունը, ոչ բավարար քունը, աշխատանքային օրվա վերջում ֆիզիկական և հոգեկան հոգնածությունը: Վերջիններս կարող են բացասաբար ազդել օրգանիզմի վրա և թույլ չտալ ուսուցչին իր ստեղծագործական ներուժը լիակատար դրսևորելու մանկավարժական գործունեության ընթացքում:

Այդ պատճառով՝ բուհերի ֆիզիկական դաստիարակության համակարգում ուսանողներին աշխատանքային գործունեությանը նախապատրաստելու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հատուկ տեղ պետք է հատկացվի պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությանը: Վերջինս էլ, ուսուցչի պրոֆեսիագրին համապատասխան, պետք է ապահովի, բարելավի նրա շարժողական պատրաստվածության և հոգեֆիզիկական որակների օպտիմալ մակարդակը, անհրաժեշտ հետագա աշխատանքային գործունեությունում:

Այդ իսկ պատճառով բարձրացված խնդրի լուծումը հանդիսացել է հետազոտության առարկա:

Հետազոտական աշխատանքի արդյունքները ատենախոսությունում ներկայացված են 141 էջում: Այն բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը պարունակում է 22 աղյուսակ, 17 տրամագիր, 45 նկար և 7 հավելված: Օգտագործած գրականության ցանկը ներկայացված է 171 աղբյուրով:

Ընտրված թեմայի արդիականության հիմնավորումը իր յուրահատուկ և որոշակի տեղն է գտել ատենախոսական աշխատանքի «Ներածություն» բաժնում, որտեղ արտացոլված են նաև հետազոտության նպատակի, խնդիրների, գիտական նորույթի, հետազոտության տեսական նշանակության, պաշտպանության դրույթների պարզաբանումները:

Ատենախոսության տեսական մասում հեղինակը ներկայացնում է պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության էությունը և վիճակը բարձրագույն ուսումնական հաստատություններում, մանկավարժական բուհերի ուսանողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության առանձնահատկությունները:

Հիմնվելով գրական աղբյուրների վերլուծության վրա՝ հեղինակը կառուցում է հետազոտության առարկան և կազմակերպման մեթոդիկան:

Ատենախոսը մանրամասն նկարագրում է հետազոտության ընթացքում օգտագործված մեթոդների բովանդակությունը՝ սկսած գրականության ուսումնասիրությունից մինչև մաթեմատիկական վիճակագրական մեթոդները: Բնութագրվում է նաև հետազոտվողների քանակակազմը և հետազոտության կազմակերպման ընթացքը:

Ուսումնասիրելով 18-20 տարեկան ուսանողուհիների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության առանձնահատկությունները՝ հեղինակը մշակում է այդ ցուցանիշների մոդելային գնահատման սանդղակները, որոնք հույժ կարևոր են ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստվածության մակարդակը գնահատելու տեսանկյունից:

Ուսուցիչների և ուսանողուհիների անկետային հարցման տվյալները, որին համապատասխանաբար մասնակցել են 800 և 756 հոգի, ինչպես նաև գրական աղբյուրների վերլուծությունը, նախադրյալներ են հանդիսացել մանկավարժական բուհերում ֆիզիկական դաստիարակության գործընթացն ավելի նպատակամետ կազմակերպելու և իրականացնելու համար, մշակելու համապատասխան մեթոդիկա և մանկավարժական մոտեցումներ ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական

ֆիզիկական պատրաստվածության և հոգեֆիզիկական ցուցանիշների մակարդակը բարելավելու համար:

Ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության կատարելագործման ծրագրի հիմքը կազմել են բազմաթիվ վարժություններ թվով 87՝ ընտրված ընդհանուր զարգացնող վարժությունների խմբից, որոնք տեղայնացվել և ուղղվել են ապագա մանկավարժների անհրաժեշտ մկանախմբերի մշակմանը և հոգեֆիզիկական որակների ձևավորմանը: Վարժությունները ուղղորդվել են ոչ միայն նրանց կատարման մանրամասն նկարագրումով, այլև նրանց բեռնվածության չափաորումով և մեթոդական ցուցումներով, ինչը առավել հեշտացնում և կիրառելի է դարձնում մշակված ծրագիրը:

Ա.Սիմոնյանը մանկավարժական գիտափորձում հաջողությամբ փորձարկել է մշակված մեթոդիկական 1,5 տարի տևողությամբ: Նշված ժամանակահատվածի ընթացքում հեղինակը ուսանողուհիների կարևոր հոգեֆիզիկական որակների և շարժողական ընդունակությունների զարգացման համար կիրառել է պրոֆեսիոնալ-կիրառական ուղղվածությամբ թվով 10 համալիրներ՝ կազմված վերը նշված 87 վարժությունների խմբից:

Մշակված ծրագիրը դրական ազդեցություն է թողել փորձարարական խմբի ուսանողուհիների շարժողական պատրաստվածության, հոգեֆիզիկական որակների վրա՝ ի տարբերություն ստուգողական խմբի, որոնց դասընթացները իրականացվել էին համաձայն բուհում կիրառվող ծրագրի: Նման դրական փոփոխությունները արդարացիորեն ապացուցում են բուհական համակարգում մշակված ծրագրի կիրառման նպատակահարմարության և անհրաժեշտության մասին:

Կարևոր է նշել գիտափորձի մեթոդիկայի և օգտագործած համալիրների մատչելի և հստակ նկարագրումը, ինչը վկայում է փորձարարական մոտեցման գրագետ մշակման և լավ տիրապետման մասին:

Դրական գնահատելով կատարված հետազոտությունը՝ միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել որոշ հիմնական նկատառումներ, որոնք պարզաբանման կարիք ունեն:

1. Ատենախոսության մի շարք էջերում՝ մասնավորապես 5-րդ, 21-րդ, 22-րդ, 27-րդ և 30-րդում, համապատասխանաբար նշված է, որ որոշ աշխատություններում ուսանողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության հարցերը որոշակիորեն ուսումնասիրված են, առկա է ֆիզիկական պատրաստության մոտեցումների և տեխնոլոգիական լուծումների բազմազանություն, առկա են բավականաչափ հետազոտություններ՝ նվիրված տարբեր ուղղվածության բուհերում ուսանողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության խնդիրներին: Ցանկալի կլիներ, որ այս դատողությունների հետ մեկտեղ տրվեին ավելի լայն մեկնաբանություններ այն չլուծված խնդիրների մասին որոնք առկա են այդ աշխատություններում: Նման պարագայում ատենախոսության արդիականությունը առավել իմաստավորված կլիներ:

2. Հետազոտության «Տեսական նշանակությունը» բաժնում նշված է. «Ընդլայնվում և խորացվում են ապագա ուսուցիչների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության ձևավորմանն ուղղված՝ ֆիզիկական դաստիարակության գործընթացի կազմակերպման վերաբերյալ գիտելիքները», սակայն աշխատանքի բովանդակության մեջ տրված չեն այդ ձեռքբերումների ցուցանիշները: Վերջինիս մասին կարելի է դատել էջ 100, 102-ում ներկայացված նյութից: Էջ 116-ի 2-րդ և 3-րդ երաշխավորություններում տրվում են առաջարկներ տեսական գիտելիքների հաղորդման և ամրապնդման վերաբերյալ, որոնք ցանկալի կլիներ ներկայացնել ավելի հիմնավորված, որից աշխատանքը առավել ներկայացվելի կլիներ:

3. Ատենախոսության որոշ բաժիններում առկա են տերմինաբանական վրիպումներ. օրինակ՝ «Հետազոտության մեթոդներ» բաժնում՝ անթրոպոմետրիա, պոլսոմետրիա, սպիրոմետրիա, էջ 83-ում՝ ոչ թե ցատկեր, այլ ոստյուններ, ոչ թե գլխի պտույտներ, այլ շրջաններ գլխով, ոչ թե ամպլիտուդա, այլ լայնույթ, ոչ թե լայն կանգ, այլ կանգ ոտքերը լայն զատած:

4. Գլուխ 3-ի 3.2.1 (էջ 63), 3.2.2 (էջ 71) և 3.3.1 (էջ 81), 3.3.2 –ում (էջ 104) ներկայացված ենթավերնագրերը արտացոլված չեն աշխատանքի «Բովանդակություն» բաժնում:

5. Ատենախոսությունում նշվում է, որ 2-րդ կուրսի երրորդ կիսամյակում ավարտվում է գիտափորձը: Ուստի կարևոր է նաև պարզաբանել բուհը ավարտելիս մշակված շարժողական ընդունակությունները ինչպիսի փոփոխություն են կրում, վատթարանում են արդյոք ցուցանիշները, քանզի «Ֆիզկուլտուրա» առարկան չի դասավանդվում 3-րդ և 4-րդ կուրսերում:

6. «Գործնական երաշխավորություններ» բաժնի (էջ 120) 9-րդ ենթակետում նշված է՝ շարժողական պատրաստվածության մակարդակը որոշել ըստ մոդելային սանդղակների, սակայն հասկանալի չէ՝ ինչու ատենախոսը իր կողմից մշակած մոդելային սանդղակները չի կիրառել իր փաստագրող և գիտափորձի արդյունքները գնահատելիս:

Վերը նշված նկատառումները ամենևին չեն նվազեցնում իրականացված մեծածավալ հետազոտության արդյունքները և կիրառական նշանակությունը:

Հետազոտական աշխատանքը աչքի է ընկնում հստակ կառուցվածքով, նյութի ուսումնասիրման հստակ տրամաբանությամբ և ստացված արդյունքների գրագետ մեկնաբանությամբ: Եզրակացությունները հստակ են և հիմնականում արտացոլում են հետազոտության ընթացքում ստացած արդյունքները:

Սեղմագրում լիովին ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները:

## **ԵՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆ**

Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը, գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված տվյալների հավաստիությունը և արված հիմնավոր եզրակացությունները հիմք են տալիս Ասյա Արթուրի Սիմոնյանի «Մանկավարժական բուհերի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկան» թեմայով ատենախոսությունը համարել ավարտուն, ինքնուրույն գիտական աշխատանք:

Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ ատենախոսն անկասկած արժանի է հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանին՝ ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀՖԿՄՊԻ-ի  
գիտական աշխատանքների գծով պատասխանատու  
դոցենտ, մանկ.գիտ.թեկնածու՝



Ա.Լ. Հակոբյան

Հաստատում եմ դոցենտ  
Ա.Լ.Հակոբյանի ստորագրությունը  
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի  
և սպորտի պետական ինստիտուտի  
գիտական քարտուղար, պրոֆեսոր՝



Ա.Ա. Չատինյան

29.09.2020թ.